

## ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,  
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխությունների և լրացումների նպատակն է ապահովել գործերի դատական քննության արդյունավետ իրականացումը, դրանց մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պատշաճ իրացումը, գործերը ողջամիտ ժամկետներում քննելու և լուծելու պահանջի ապահովումը, դատարանների բնականոն գործունեության ապահովման ինստիտուցիոնալ երաշխիքների ամրապնդումը և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված միջազգային դատական ատյանների (մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի) ու ՀՀ Վճռաբեկ դատարանի դատական ակտերով արձանագրված մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտումների հետևանքների վերացումն ու այդ խախտումների զոհերի իրավունքների վերականգնումը: Ըստ այդմ, նախագծերի փաթեթով առաջարկվող հիմնական փոփոխություններն ու լրացումները հանգում են հետևյալին՝

1) Որպես դատական սանկցիայի առանձին տեսակ նախատեսել իրավունքի իրականացման սահմանափակումը, որն առաջարկվում է դատարանի կողմից կիրառելի դարձնել այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը, իր դատավարական իրավունքներից օգտվելիս, պարբերաբար չարաշահում է դրանք՝ վտանգելով դատավարության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանության երաշխավորումն ու արդարադատության շահի ապահովումը: Դատավարության մասնակիցների նման վարքագիծը, չարժանանալով դատարանի իրավաչափ և համաչափ միջամտության վտանգում է ողջամիտ ժամկետներում գործի քննության և լուծման պահանջը, խաթարում արդարադատության բուն էությունը և հանգեցնում հանրության մոտ դատական իշխանության նկատմամբ վստահության ու հարգանքի նվազման: Նախագծով առաջարկվում է, որպեսզի

դատարանը, դատավարության մասնակցի կողմից նման վարքագիծ պարբերաբար դրսևորելու դեպքում, իրավունք ունենա սահմանել այն դատավարական իրավունքի իրականացման պայմանները (օր.՝ քանակական և ժամկետային սահմանափակումներ կիրառելով), որոնց իրականացումը օգտագործվում է իրավունքի չարաշահում կատարելու համար: Համապատասխան փոփոխություններ են առաջարկվում նաև դատավարական օրենսգրքերում:

2) առաջարկվում է Բարձրագույն դատական խորհրդին (այսուհետ՝ ԲԴԽ) օժտել դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու լիազորությամբ՝ նախատեսելով, որ վերջինիս իրացման ուղղությամբ ԲԴԽ իրավունք ունենա ընդունելու նորմատիվ իրավական ակտեր: Այս լիազորության անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ ԲԴԽ-ն իր՝ Սահմանադրությամբ, ինչպես նաև ՀՀ Դատական օրենսգրքով նախատեսված լիազորությունների իրականացման ընթացքում, որոնք կապված են, օրինակ, դատարանների ծանրաբեռնվածության, աշխատանքի արդյունավետ կազմակերպման, դատական պրակտիկայի կայունության ապահովման, ինչպես նաև գործերի արագ քննությունն ու լուծումը, մարդու իրավունքների և ազատությունների ու օրինական շահերի, պետության և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ, երբեմն կարիք է ունենում հրատապ կարգավորում տալ առանձին հարցերին, ապահովել այդ խնդիրների լուծման ինստիտուցիոնալ դատարանակազմական մեխանիզմների արդյունավետությունը: Այդ գործառույթների իրականացման համար, ԲԴԽ-ին առաջարկվում է օժտել նաև նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ:

3) առաջարկվում է, որպեսզի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, Արդարադատության նախարարից և Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովից բացի, ԲԴԽ-ին դիմելու իրավունք ունենան նաև ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ իրենց մասնակցությամբ կոնկրետ գործով, եթե առերևույթ առկա է էական կարգապահական խախտման որոշակի հիմք և պահպանված են սահմանված ժամկետները: Այս դեպքում, քաղաքացու կամ իրավաբանական անձի դիմումը ինքնին առիթ է լինելու հարցը ԲԴԽ-ի կողմից քննելու համար: Իհարկե, ԲԴԽ-ն պետք է լիազորություն ունենա վերադարձնելու դիմումը, եթե կան դրա քննությունը մերժելու հիմքեր: Ինչ վերաբերում է հնարավոր այն փաստարկին, որ քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից դիմում ներկայացնելը կարող է կրկնօրինակել

ԲԴԽ դիմող մյուս սուբյեկտների գործառույթները, ապա նշենք, որ նման կրկնօրինակում արդեն իսկ առկա է ներկայումս ԲԴԽ դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների պարագայում: Մասնավորապես, Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից դիմում չներկայացնելու դեպքում, դիմումը կարող է ներկայացվել Արդարադատության նախարարի կողմից և հակառակը, ինչը նշում է նաև Վենետիկի Հանձնաժողովը ՀՀ Դատական օրենսգրքի վերաբերյալ իր 2019թ. հոկտեմբերի 14-ի Կարծիքի (Opinion No. 963/2019) 17-րդ կետում: Այս փոփոխության առաջարկի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ վարույթ հարուցելու մերժումները հրապարակային չեն և կատարվում են ոչ պատճառաբանված որոշման տեսքով, խախտումների ենթադրյալ զոհերին անմիջապես ԲԴԽ դիմելու իրավունք վերապահելը կնպաստի նաև գործընթացի թափանցիկության ապահովմանը<sup>1</sup>:

4) առաջարկվում է ԲԴԽ-ին լիազորություն վերապահել առանձնակի բարդություն ունեցող քրեական գործերի քննության արդյունավետությունը և դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պահպանումն ապահովելու նպատակով և ելնելով արդարադատության շահերից, տվյալ դատարանի կազմից ընտրել այդ գործերի քննության համար վիճակահանության մասնակից դատավորների՝ համապատասխան մասնագիտացումը կամ ենթամասնագիտացումը ունեցող այն դատավորների թվից՝ հաշվի առնելով վերջիններիս կողմից նախկինում նմանատիպ գործեր քննած լինելու հանգամանքը և այդ ընթացքում դատական նիստի բնականոն ընթացքը ապահովելու դրսևորած հմտությունները: Ըստ այս առաջարկի, ԲԴԽ-ն ընտրելու է

---

<sup>1</sup> Վիճակագրության համաձայն՝

- 09.04.2018-31.12.2018 թթ. ժամանակահատվածում ստացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջի վերաբերյալ 167 հաղորդում. Հանձնաժողովի կողմից հարուցվել է 14 կարգապահական վարույթ,
- 2019 թվականի ընթացքում Հանձնաժողովը ստացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջի վերաբերյալ 296 հաղորդում. Հանձնաժողովի կողմից հարուցվել է 31 կարգապահական վարույթ,
- 01.01.2020-01.07.2020 թթ. ժամանակահատվածում ստացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու 114 հաղորդում, որոնցից հարուցվել է 12-ը, իսկ մնացած 102 հաղորդումները մերժվել են:
- 09.04.2018-31.12.2018 թթ. ընթացքում ստացվել է դատական գործերի ընթացքից և դատավորների գործողություններից դժգոհության վերաբերյալ (այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ պահանջ բովանդակող) 435 դիմում. նախարարի կողմից հարուցվել է 3 կարգապահական վարույթ,
- 2019 թ. ընթացքում ստացվել է դատական գործերի ընթացքից և դատավորների գործողություններից դժգոհության վերաբերյալ (այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ պահանջ բովանդակող) 627 դիմում. նախարարի կողմից հարուցվել են 19 կարգապահական վարույթներ.
- 01.01.2020-01.07.2020 թթ. ժամանակահատվածում ստացվել է դատական գործերի ընթացքից և դատավորների գործողություններից դժգոհության վերաբերյալ (այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ պահանջ բովանդակող) 292 դիմում. նախարարի կողմից հարուցվել են 9 կարգապահական վարույթներ: Տես՝ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԹՎԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՆ ՆՐԱՆՑ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇՆԻՔ, Իրավունքի զարգացման եւ պաշտպանության հիմնադրամ, Երևան, 2020, էջ 4-5:

նշված չափանիշներին համապատասխանող երեք դատավորների, ում միջև տվյալ առանձնակի բարդություն ներկայացնող գործը բաշխվելու է նրանց ներկայությամբ իրականացվող վիճակահանությամբ:

Բացի այդ, առաջարկվում է, որպեսզի ԲԴԽ-ն լիազորություն ունենա նշված չափանիշներին համապատասխանող գործը վերցնելու այն դատավորներից, ովքեր դրսևորել են նման գործեր քննելու իրենց մոտ անհրաժեշտ հմտությունների բացակայությունը: